ISSN 1829-412X



1.2015

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ



ՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Մարտի 27-ին բազմամարդ էր ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մեծ դահլիճը: Այդ օրը ԿԱԻ-ն հյուրընկալել էր *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին:* Ինստիտուտի մասնագետների խնդրանքով և տնօրենության հրավերով Աշոտ Մելքոնյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ «Հայության խնդիրները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին» թեմայով:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց, բացման խոսքով հանդես եկավ և բանախոսի անցած ուղին ու վաստակը հանգամանալիորեն ներկայացրեց ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի տնօրեն Նորայր Ղուկասյանը: Մասնակիցներին ուղղունելուց, ջերմ բարեմաղթանքներ հղելուց ու հետագա հաջողություններ և ձեռքբերումներ մաղթելուց հետո Աշոտ Մելքոնյանը սկսեց դասախոսությունը: Այն ավելի շուտ սրտաբուխ զրույց էր հիշեցնում: Նա մասնավորապես նշեց, որ իր համար մեծագույն պատիվ է նման լսարանի առջև հանդես գալը: «Գործ ունենք գիտակ մարդկանց հետ, որոնց հետ դասագրքեր ենք գրել, ճանապարհ անցել. ծանոթ դեմքեր են բոլորն այստեղ»: Բանախոսը շեշտեց, որ ինքը կուզենար՝ ոչ թե ակադեմիական մակարդակով դասախոսություն կարդալ, այլ ուղղակի զրույց ծավալվեր, հարց ու պատասխան լիներ: Չէ՞ որ շատ բաների մասին ներկա լսարանը լավ գիտի, և ինքն իր խոսքը պետք է կառուցի այն նյութի հիման վրա, որ շատերին ծանոթ է հեռուստաէկրաններից, զանազան հանդիպումներից:

«Տարիների ընթացքում, հատկապես 2000-ական թվականներից սկսած ես փորձել եմ հետևել «Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթաց» ասված երևույթին և միայն, հավատացնում եմ ձեզ, վերջին մեկ-երկու տարվա ընթացքում փորձել եմ հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել այդ ճանաչման գործընթացի ընդհանուր շրջանակներում, առավել ևս 100 տարի անց: Ինչ գնահատականներ ենք մենք տվել մեր անցած ճանապարհին, և վերջապես գլխավոր հարցը, որի պատասխանի մեջ մենք դեռ շարունակում ենք խարխափել, այն է, թե ինչ է մեր ուզածը: Երբ Ցեղասպանությունից հետո արդեն 5-րդ սերունդն է անցել, եկեք խոստովանենք. մարդկային կորուստների կսկիծն անմիջականորեն մենք չենք զգում, որովհետև սերունդներ են անցել և ժամանակներ: Դժվար բան եմ ասում, սակայն կարծես թե վերքերը բուժվել են, կարծես թե, թեական եմ սա ասում, որովհետև այդ վերքն անբուժելի է, քանի որ խնդիրը դեռ շարունակում է գոյություն ունենալ: Ի սկզբանե Ցեղասպանության խնդիրը եղել է քաղաքական: Իսկ քաղաքական խնդրի պայմաններում, երբ հարցը բացարձակապես չի լուծվել, այդ կորստյան կսկիծը մշտապես ուղեկցելու է մեզ: Եվ այն բարդույթավորված կեցվածքը, որ մենք այսօր ունենք, մեզանում շարունակելու է պահպանվել: Ես այն կարծիքին եմ, որ քանի դեռ Ցեղասպանության դիմաց տեղի չի ունեցել հատուցում, մենք կշարունակենք մնալ որպես բարդույթավորված ժողովուրդ և միայն հատուցման, այն էլ հողային հատուցման պարագայում, այդ բարդույթից, թերևս, կարող ենք ազատվել: Շատ են այն մասնագետները, որ փաստում են, թե մենք ունենք իրավական լուրջ հիմքեր դիմելու միջազգային դատարան: 100-րդ տարելիցի նախաշեմին վերջապես մեր մեջքը սկսել ենք ուղղել, և աշխարհին պետք

է ցույց տանք այն իրավական հիմքերը, որոնցով մենք կարող ենք հասնել հաջողության: Ցեղասպանվածի բարդույթից չենք ազատվի, կմնանք զրկվածի, զարկվածի կարգավիճակում, եթե չլինի հատուցում, եթե մեր հայրենիքը չվերադարձնենք:

Հիմա, ընդհանուր գծերով, տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ 1915 թ., և դրանից հետո աշխարհին ինչպես վերաբերվեց մոտավորապես 4–5 տարի հետո, երբ որ հաղթանակած Անտանտի երկրները պարտված Օսմանյան Թուրքիային՝ ցեղասպանություն իրականացրած երկրին, պարտադրեցին 1918 թ. Մուդրոսի զինադադարը, հետո էլ արդեն հաշտության պայմանագիր:

19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբին արդեն մարդկությանը ծանոթ էր մի շարժում, որը կոչվում էր «Կանաչների շարժում», որովհետև երկրագունդը տեխնոլոգիական ընդհանուր զարգացումների պայմաններում սկսեց վտանգվել և մարդիկ հասկացան, որ բուսական և կենդանական աշխարհը վտանգված է, և, բնականաբար, սկսվեցին «Կանաչների շարժումը» և համանման այլ շարժումներ: Եվ Առաջին աշխարհամարտի պայմաններում մարդիկ եկան այն կարծիքին, որ այդ տեսակների մեջ, թեև զուգահեռներն այնքան էլ տեղին չեն, համենայն դեպս, դրանք կան. մարդկային տեսակը ևս վտանգված է՝ էթնոսի մակարդակով. խոսքը վերաբերում է տարբեր ժողովուրդների վերացման վտանգին, որի մասին հանրությունը ևս պետք է մտածի: Երբ Առաջին համաշխարհային պատերազմի վերջավորությանը մեծ տերությունները սկսեցին մտածել Ազգերի լիգայի ստեղծման մասին, զուգահեռաբար Ազգերի լիգայի ստեղծման այդ գաղափարը, դրա անհրաժեշտությունը պայմանավորում էին էթնոսների վերացման վտանգը կանխելու անհրաժեշտությամբ: Եվ այդ էթնոսների մեջ, անկասկած, մենք էինք, որովհետև 1915 թ. մեր տեսակը վտանգվեց, և շատ–շատերիս համար անհասկանալի է, թե ինչու այդքան բարյացակամ վերաբերմունք եղավ Արևմուտքի երկրների կողմից ՀՀ-ի նկատմամբ, որ 70 հազ. քառ. կմ տարածք ունեցող հանրապետությունում, ուր թերևս թվում էր, թե այդքան սահմանափակ բնակչությամբ բավարար էր 70 հազ. քառ. կմ-ը, և կարիք չկար Արևմտյան Հայաստանի խնդիրը լուծելու և Միացյալ Հայաստանի գաղափարը բերել մեջտեղ: Ու մենք, անկասկած, կարծում ենք, որ դա ավելի շատ մեր նախաձեռնությունն էր՝ երկու պատվիրակությունների տեսքով: Երկու պատվիրակություններից մեկը գլխավորում էր Ա. Ահարոնյանը, որը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը: Մյուսը Ազգային պատվիրակությունն էր՝ ի դեմս Պողոս Նուբար փաշայի, որը ներկայացնում էր աշխարհասփյուռ արևմտահայությանը: Բայց տեսեք, որ մեծ տերությունները ևս այդ խնդրում որոշակի մտահոգություն ունեին և ընդառաջ գնացին մեր պահանջներին, մասնավորապես՝ խոսքս Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջի մասին է: Մենք, չգիտես ինչու, Լ. Ջորջի միայն հետևյալ խոսքերն ենք հիշում և փաստում: Տեղի ունեցած ցեղասպանության մասին Լ. Ջորջը ինքնախոստովանքի տարբերակով ասում էր, որ «Մենք հայ ժողովրդին դրեցինք մեր իսկ բարձրացրած զոհասեղանի վրա»: Այսինքն՝ իրենք էին մեղավոր, որ Հայկական հարցը 61-րդ հոդվածի տեսքով մեջտեղ բերեցինք և հետո այդ՝ մեր մատուցած զոհասեղանի վրա զոհեցինք մի ամբողջ ժողովուրդ: Այս վերջին հատվածն ենք հիշում, բայց չենք հիշում Ա. Ահարոնյանի հետ նրա ունեցած ամբողջ բանակցային

գործընթացը: Ա. Ահարոնյանի գրառումներին և դրանց մանրամասներին ծանոթանալով (ծոցատետրը, ուր նա գրառումներ է արել, թե ում հետ է հանդիպել Փարիզի վեհաժողովի շրջանակներում, հրատարակվեց մի քանի տարի առաջ) հետաքրքիր հետևություններ կարելի է անել: Ահարոնյանն ասում է, թե Լ. Ջորջի հետ հանդիպման ժամանակ հիմնականում քննարկվում էր այն հարցը, թե որքանով է կենսունակ Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Եվ նա միշտ հարցնում էր, թե ինչ տարածքներ են հայերին պետք, որոնք որպես կենսագործության պայմաններ կապահովեն մեր վաղվա օրը: Ավետիս Ահարոնյանը առաջին հերթին պնդում էր Էրզրումի վրա, որովհետև առանց Արևմտյան Հայաստանի կենտրոնական քաղաք Էրզրում – Կարինի, մենք չէինք կարող գոյատևել: Բայց Լ. Ջորջը միշտ մատնանշում էր, որ, այնուամենայնիվ, հայերը ներփակ, այսպես ասած անկլավային վիճակում կմնան, եթե միայն Էրզրումը պահանջեն: Իսկ Պողոս Նուբար փաշան մեկ այլ տարբերակ էր առաջարկում, որն այնքան էլ իրատեսական չէր՝ ելք դեպի Միջերկրական ծով, այսինքն՝ ծովից ծով Հայաստան՝ Կիլիկիայով հանդերձ: Գիտենք, որ արևմտահայության զգալի մասը, որ փրկվեց, ծագումով կիլիկիահայեր էին՝ ներկայիս լիբանանահայերը, սիրիահայերը և այլն: Բանն այն է, որ այդ հայության զգալի մասին ֆիզիկապես չբնաջնջեցին, այլ միայն տեղահանեցին: Տեսեք, թե ինչ հետաքրքիր բան տեղի ունեցավ. երբ նայում ես տեղահանության և կոտորածների աշխարհագրությանը, տեսնում ես, որ Արևմտյան Հայաստանի կենտրոնական և արևելյան հատվածների բնակչությունը իսպառ բնաջնջվեց ու ոչնչացվեց, որովհետև վտանգ էր ներկայացնում այն առումով, որ Ռուսական սահմանին մոտ լինելով՝ հայկական պետություն ստեղծելու այդ ծրագիրը շատ ավելի իրատեսական է, քան Հայաստանի արևմտյան հատվածներում գտնվողներինը: Եվ, օրինակ, Կեսարիա, Սեբաստիա, կենտրոնական շրջաններ, Անատոլիա, Կիլիկիա և այլն, ջարդերը շատ ավելի սահմանափակ եղան: Դրանք ավելի շուտ տեղահանության տեսք ունեին: Պատկերացրեք՝ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապպայանին չսպանեցին. 1700 հոգի հոգևորական են սպանել՝ Կարնո առաջնորդ Սմբատ Սաատեթյանից սկսած մինչև վերջին քահանան: Երբ նայում ես Թեոդիկի կազմած ցուցակներին, տեսնում ես, որ 90 տոկոսով դրանք վերաբերում են Արևմտյան Հայաստանի բուն հայկական թեմերի հոգևորականներին: Իսկ դրանից դեպի արևմուտք ընկած, հատկապես՝ Կիլիկիո հատվածի հոգևորականությանը և բնակչությանը այնքան էլ ձեռք չեն տվել, միայն տեղահանել են, որովհետև խնդիրը հետևյալ կերպ էր դրված: Ցեղասպանության նպատակն ի սկզբանե հայերին հայրենիքից զրկելն էր, իսկ հայրենիքը Կիլիկիան չէր, Կեսարիան չէր, հայրենիքը Փոքր Ասիան չէր… Հայրենիքը Արևմտյան Հայաստանն էր, որը ժամանակի թուրքական քարտեզների մեջ նշված էր «Էրմենիստան»: 1803 – 1850-ական թվականների վերջերին տպագրված բոլոր քարտեզներում գրված էր արաբատառ «Էրմենիստան», սակայն Եղեռնից հետո տպագրված բոլոր քարտեզներում նոր տերմին է ի հայտ գալիս՝ «Դողու Անադոլու»՝ Արևելյան Անատոլիա: Սա տաֆտալոգիա է, ապուշություն. Անատոլիա հունարեն *արևելք* է նշանակում: Իսկ հիմա, քանի որ Անատոլիան Փոքր Ասիան էր, իսկ դրանից այն կողմ «Էրմենիստանն» էր, որն արդեն 1915 թվականից հետո հայաթափված էր, պիտի նոր տերմինով կոչվեր, ուստի անունը դրեցին «Դողու Անադոլու»՝ *Արևելյան Արևելք*: Ես միշտ կատակով ասում

եմ, թե խոսքը, ըստ երևույթին, Ճապոնիայի մասին է, որովհետև ամենաարևելքը Ճապոնիան է՝ ծագող արեգակի երկիրը: Ուրեմն՝ Արևմտյան Հայաստանը դարձավ «Դողու Անադոլու»: Տեսեք՝ ի սկզբանե այնպես արվեց, որպեսզի հայաթափվեր, հայազրկվեր բուն Արևմտյան Հայաստանը: Սա նշանակում է, որ Ցեղասպանության բուն, գլխավոր դրդապատճառը ֆիզիկական բնաջնջումը չէր, որքան հայրենազրկումը, այլապես տեղում կբնաջնջեին բոլորին, չէին տեղահանի և տանի ոչնչացնելու սիրիական անապատներում… :

Անկախ պետականության բացակայության պայմաններում՝ 1921-1991 թթ. միջազգային ասպարեզում Հայ դատի հետապնդման խնդիրն առավելապես մնում էր սփյուռքահայության «մենաշնորհը»: Թերևս կարելի է հիշել 1945-1947 թվականները., երբ Խորհրդային Միության արտաքին քաղաքականության համատեքստում Խորհրդային Հայաստանի անունից խնդիր դրվեց շոշափել նաև հայկական հողերի հարցը: Սակայն այն հանդիպեց անգլո-ամերիկյան կողմի ուժեղ հակազդեցությանը: Շուտով այն մոռացության տրվեց նաև ԽՍՀՄ-ի կողմից: Ավելին՝ 1953 թ. մայիսին խրուշչովյան ղեկավարությունը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Հայոց մեծ եղեռնի հարցի շոշափումը խորհրդային երկրում փաստորեն դարձավ խիստ վտանգավոր և փակ թեմա:

Միայն 1965 թ. Հայոց մեծ եղեռնի 50-րդ տարելիցի օրերին և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում հայ ժողովուրդը բարձրաձայնեց իր խնդիրը՝ Ցեղասպանության դատապարտումն ու բռնազավթված հայրենիքի վերադարձը: 1965 թ. սկսված համընդհանուր ազգային պայքարի վերելքի պայմաններում հեռավոր Ուրուգվայն առաջինը պետականորեն ճանաչեց և դատապարտեց Հայոց մեծ եղեռնը:

Հայոց ցեղասպանության և հատուցման խնդրի վերաբացումը խիստ անհանգստացրեց թուրքական իշխանություններին: Վերջիններս սկսեցին մտավախություն ապրել, որ Սևրի դաշնագիրը ստորագրած մեծ տերությունները կարող են կրկին առիթից օգտվել և օրակարգ բերել հայկական հողերի հարցը: Նման իրավիճակում նրանք առաջ քաշեցին մերժողականության քաղաքականությունը՝ նպատակ ունենալով համաշխարհային հանրության ուշադրությունը շեղել խնդրի քաղաքական կողմից և այն ներկայացնել որպես պատմաբանների միջև գիտական բանավեճի նյութ:

Այդուհետ սկսվեց մի ժամանակաշրջան, երբ հայկական կողմը, ակամայից մոռացության տալով դատապարտման ու հատուցման հրամայականը, իր բոլոր հնարավոր միջոցներն ի սպաս դրեց թուրքական մերժողականությանը հակադարձելու համար:

1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը, Թուրքիայի մուտքը Եվրամիություն փակելու նպատակով, «հանկարծ» հիշեց մոռացված Հայոց ողբերգությունը և միջազգային այդ հեղինակավոր կառույցի մեջ մտնելու համար թուրքական իշխանություններից, ի թիվս այլ հարցերի, պահանջեց ճանաչել ու դատապարտել Հայոց մեծ եղեռնը:

1988 թ. սկսված հուժկու Արցախյան շարժման ընթացքում, մասնավորապես սումգայիթյան ողբերգության առիթով, Ցեղասպանության հարցը զուգահեռաբար դարձավ հասարակական քննարկումների նյութ: Խնդիրը տրամաբանորեն հասավ մինչև Խորհրդային Հայաստանի խորհրդարան՝ Գերագույն խորհուրդ, ուր, հակա-

ռակ մոսկովյան ղեկավարության կամքի, նոյեմբերի 22-ին ընդունվեց Մեծ եղեռնը դատապարտող օրենք: Թվում էր, որ այս կարևոր բանաձևով սկսվում էր ինքնուրույնության ուղին բռնած Հայաստանում Ցեղասպանության խնդիրը պետական քաղաքականության ուղղություններից մեկը դարձնելու ժամանակաշրջան: Ավաղ, այդպես չեղավ:

Այդ հարցում հատկապես կարծր դիրք բռնեց ՀՀՇ ղեկավարությունը: Հատկանշական է, որ վերջինս մեծ ջանքեր գործադրեց, որ անկախության ուղին նախանշող կարևոր փաստաթղթի՝ 1990 թ. օգոստոսի 23-ի անկախության հռչակագրում Ցեղասպանության հարցը տեղ չգտնի: Սակայն Գերագույն խորհրդի պատգամավորները քվեարկեցին խղճի թելադրանքով, և Ցեղասպանության հարցը ներառվեց անկախության հռչակագրում:

Հետագայում ևս ՀՀՇ-ականները, Թուրքիայի հանդեպ զգուշավոր կեցվածք պահպանելու անհրաժեշտության պատճառաբանությամբ, ամեն ինչ արեցին այդ հարցը նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության շրջանակից հանելու ուղղությամբ:

Հայոց ցեղասպանության հարցում անկախ պետականության դիրքորոշումը փոխվեց 1998 թ. մարտին տեղի ունեցած իշխանափոխությունից հետո: ՀՀ նոր նախագահը խնդիրը հնչեցրեց Ստամբուլյան գագաթնաժողովում, ՄԱԿ-ում, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում: Եղեռնի հարցը դարձավ ՀՀ արտաքին քաղաքականության բաղադրամաս: Պատահական չէ, որ դրանից հետո 1998-2000 թթ. միանգամից Բելգիայի, Ֆրանսիայի, ԼՂՀ-ի, Շվեդիայի, Լիբանանի ու Իտալիայի խորհրդարանները, Նյու Յորքի ու Հռոմի քաղաքապետարանները և Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ն դատապարտեցին Հայոց մեծ եղեռնը: Հիշենք, որ 1965 թվականից ի վեր Ցեղասպանությունը ճանաչել էր ընդամենը հինգ երկիր (Ուրուգվայ, Կիպրոս (1982), Արգենտինա (1985), Ռուսաստան (1995) և Հունաստան (1996):

Այդուհանդերձ, Ռ. Քոչարյանի պաշտոնավարության տարիներին էլ մեր պահանջները խնդրի ճանաչման ու դատապարտման մակարդակից չբարձրացան: Դրանում համոզվելու համար փորձենք ճանաչման գործընթացին հետևել հաջորդ տարիների օրինակով, երբ մեր երկրի մոտեցումներում նկատվեց նախկին քաղաքականությունից որոշ չափով նահանջելու, ավելի զիջողական դիրքորոշում որդեգրելու միտում: Դա, ամենայն հավանականությամբ, կապված էր Հայաստանի վրա մեծ տերությունների բանեցրած ճնշումների՝ հայ-թուրքական «հաշտեցման» կուրս պարտադրելու իրողության հետ:

2001 թ. ԱՄՆ-ի պետդեպարտամենտի հովանավորությամբ սկսեց գործել այսպես կոչված «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը» (ՀԹՀՀ): Որքան էլ ՀՀ իշխանությունները փորձեցին ժխտել այդ հանձնաժողովի հետ իրենց գործակցությունը, այնուամենայնիվ, ակնհայտ էր, որ Հայաստանի ղեկավարությունը ոչ միայն տեղյակ էր տարվող բանակցություններին, այլև վերահսկում էր դրանք: Հետաքրքրական է, որ ՀԹՀՀ-ի գործունեության ողջ շրջանում զուգահեռաբար նկատվեց հայկական կողմին Ցեղասպանության թեմայով բանավեճի մեջ ներքաշելու միտում՝ և՛ թուրքական, և՛ եվրոպական ու ամերիկյան զանազան կազմակերպությունների, գիտահետազոտական ու կրթական կառույցների կողմից: Հստակ երևում էր, որ հայերին գիտական բանավեճի մեջ ներքաշելով, առավել ևս նրանց

հետ «հաշտվելով» (զոհի և դահճի միջև ի՞նչ հաշտեցում)՝ թուրքական դիվանագիտությունը լուծում էր մի քանի խնդիր. նախ՝ հայ գիտնականները, մասնավորապես պատմաբանները, նստելով գիտական բանավեճի թուրքերի հետ Եղեռնի հարցի շուրջ, ակամայից հայտնվում էին «զրոյական» վիճակում և փաստորեն նույնպես կանգնում Ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնողների դիրքերում: Երկրորդ՝ թուրքական կողմը հրաշալի հնարավորություն էր ստանում աշխարհին համոզելու, որ առայժմ, երբ ընթանում են հայ-թուրքական գիտական վեճերը, կարիք չկա խորհրդարանական կամ այլ մակարդակով անդրադառնալ այդ խնդրին: Այ, կավարտվեն այդ բանավեճերը, կգտնվեն դրանց լուծումները, նոր կարելի է արծարծել խնդիրը: Ինքնին հասկանալի էր, որ Արևմուտքի գործուն մասնակցությամբ (գուցեև ազնիվ մղումներով) հայկական կողմի համար պատրաստվում էր ծուղակ:

Դժբախտաբար, հայկական կողմը, որը ներկայացնում էին նաև ճանաչված գործիչներ (ՀՀ նախկին արտգործնախարար, ՀՀՇ-ական Ալեքսանդր Արզումանյան, ռուսաստանաբնակ քաղաքագետ Անդրանիկ Միհրանյան, ամերիկահայ իրավաբան Վան Գրիգորյան և ուրիշներ), հակառակ իր բոլոր հավաստիացումներին, որ Հայոց ցեղասպանության հարցում որևէ զիգզակ չի լինելու թուրքական կողմին, ի վերջո հայտնվեց ծանր ու խաբված վիճակում և հարկադրված եղավ 2003 թ. վերջերից հակվել դեպի այդ տխրահռչակ հանձնաժողովի գործունեության դադարեցումը: ՀԹՀՀ-ի հայ անդամները, իրենց գործելաոճի ձախողումը քողարկելու նպատակով, հանդես եկան հայտարարությամբ, թե իբր հանձնաժողովի գործունեությունն ունեցել է որոշակի դրական հատկանիշ, և իրենք որոշակի քայլ են կատարել հայ-թուրքական լարվածության թուլացման ուղղությամբ:

Իրականում այդ հանձնաժողովը զգալի վնասներ հասցրեց միջազգայնորեն Հայ դատի ճանաչման գործին: Եղան դեպքեր, երբ տարբեր երկրների խորհրդարաններ իրենց օրակարգերից հանեցին Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևերի նախագծերը՝ ՀԹՀՀ-ի աշխատանքների ավարտին սպասելու պատճառաբանությամբ (օրինակ, Գերմանիա, Ավստրիա, Կանադա և այլն): Պատահական չէ, որ ՀԹՀՀ-ի գործունեության ընթացքում (2001 թ. – 2003 թ. նոյեմբեր) ոչ մի երկիր չքննարկեց ու չճանաչեց Հայոց եղեռնը: Միայն 2003 թ. դեկտեմբերին Շվեյցարիայի, 2004 թ. սկզբին՝ նաև Կանադայի, նոյեմբերի 30-ին՝ Սլովակիայի, տարեվերջին՝ Նիդեռլանդների խորհրդարանները, երբ ՀԹՀՀ-ն արդեն փաստացի լուծարվել էր, անդրադարձան Հայոց եղեռնին և պետականորեն դատապարտեցին այն: 2004 թ. վերջին Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու բանակցային գործընթացի սկսման կապակցությամբ կրկին շրջանառվեց Հայոց ցեղասպանությունը: Կարծում ենք, որ Հայ դատի հետապնդման իմաստով 2001-2003 թթ. անպտուղ երեք տարիների հաշվին մեղքի որոշակի բաժին ունեն նաև Հայաստանի իշխանությունները, որոնք, զանազան ճնշումների ազդեցությամբ, հակվել էին դեպի հայ-թուրքական «հաշտեցումը» և առանց նախապայմանի Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, սահմանը բացելու անհեռանկար քաղաքականությունը, այն դեպքում, երբ անհրաժեշտ էր այդ ընթացքում խնդրով մեծապես շահագրգիռ սփյուռքյան զանազան կառույցների հետ մշակել հայ դատի ընդհանուր հայեցակարգ:

ՀԹՀՀ-ի գործունեության ձախողումից հետո թուրքական իշխանությունները փորձեցին օրակարգ հանել նոր «ծուղակ»: Արևմուտքի և վերջինիս միացած Ռուսաստանի գործուն մասնակցությամբ 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում կնքվեցին հայ-թուրքական արձանագրությունները: Թուրքական կողմի հիմնական նպատակը՝ արդեն ՄԱԿ-ի անդամ հանդիսացող Հայաստանի կողմից Ախուրյան–Արաքս գիծը դե յուրե ճանաչելը, իմա՝ Թուրքիայի նկատմամբ այլևս տարածքային պահանջ չունենալն իրավաբանորեն ամրագրելը, ինչպես նաև ԼՂ հակամարտության հարցում հայերից զիջումներ կորզելը և հայ ու թուրք պատմաբանների միջև անպտուղ բանավեճ ծավալելն էր: Այդ էր պատճառը, որ ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում այդ արձանագրությունները, որոնք թաղում էին պահանջատիրության՝ հատուցման խնդիրը, բուռն հակազդեցության հանդիպեցին:

Այսպիսով, հստակ երևում է, որ Հայ դատի հետապնդման ճանապարհին առ այսօր պետական, հայեցակարգային մոտեցում չկա: Ուստի հայության համար այս կենսական խնդրի լուծման նպատակով ազգի բոլոր ուժերի համախմբումը դառնում է կյանքի հրամայական, առավել ևս, որ Հայոց եղեռնի ճանաչման ու Թուրքիայի կողմից հատուցման (այդ թվում՝ տարածքային) հարցը, հակառակ շատ ընդդիմախոսների կարծիքի, իրականում ազգային անվտանգության համակարգի ապահովում է:

Ո՞րն է լինելու մեր մարտավարությունն ու ռազմավարությունն այս խնդրում.

1. Հայ դատի հետապնդումը պետք է լինի մշակված համազգային հայեցակարգի շրջանակներում, և գործընթացը զգուշավորությամբ ուղղորդվի պետական մակարդակով:

2. Անհրաժեշտ է ամեն կերպ շարունակել Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված քայլերը՝ ընդհուպ մինչև ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի և Թուրքիայի կողմից ճանաչում և հատուցում:

3. Հատուցման խնդրի առումով խիստ կարևոր է հետևել Հայ դատին վերաբերող նորանոր երկրների խորհրդարանական որոշումների հայանպաստ ձևակերպումներին՝ մասնավորապես հայերի՝ պատմական հայրենիքի նկատմամբ իրավունքի արձանագրման տեսանկյունից: Հիշենք, որ ավելի քան մեկ տասնյակից ավելի երկրների ընդունած բանաձևերից միայն Ռուսաստանի Դաշնության պետդումայի 1995 թ. ապրիլին ընդունած փաստաթղթում է հիշատակվում հայերի պատմական հայրենիք Արևմտյան Հայաստանը: Մինչդեռ մյուս որոշումներում գերակշռում է անորոշությունը: Այս հանգամանքն այսօրվա Թուրքիային ազատում է հայությանը հատուցելու ամեն մի պարտավորությունից, առաջին հերթին՝ տարածքների վերադարձման հարցում:

4. Խնդիրը գիտական հարթությունից հարկավոր է տեղափոխել իրավաքաղաքական դաշտ, Միջազգային իրավունքը լրամշակել նոր դրույթներով, մասնավորապես՝ ազգին, էթնիկ հանրությանը հայրենազրկելու համար պատիժ նախատեսող հոդվածներով»:

Զեկուցումն ավարտելուց հետո բանախոսը պատասխանեց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին հայության առջև ծառացած հիմնախնդիրների և մեր հետագա մարտավարության վերաբերյալ ունկնդիրներին հուզող հարցերին:

Հրատարակության պատրաստեց Արման Մալոյանը

ՀԱՅԻ ԵՐԳԸ

Որքան էլ կերան անհագ,
Որքան էլ հոշոտեցին,
Որքան էլ անսփոփանք
Ու մենակ ինձ թողեցին,-

Փորձեցին կտրել լեզուս
Ու հանել իմ բերանից,
Հոգեվարք բերել հոգուս,
Ինձ զրկել հայ մերանից…

Ես երբեք չընկգացա,
Օձին էլ ես ներեցի,
Ընկնելով վեր բարձրացա,
Մեռնելով՝ հավերժեցի…

Փորձեցին ուղեղս ուտել,
Կտցեցին գանգս ցավող,
Փորձեցին սիրտս հոշոտել՝
Բորենու նման դավող…

Մեռնելով՝ հավերժեցի…
Ու պիտի այսպես գնամ,
Երկինքն էլ գլխիս պայթի՝
Արարատ պիտի մնամ…